

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՀԱՅՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՏԻԱՐԿԻՆ ԱՄԵՆ. Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ ՄՈՒՏԲԸ ԵՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

ՄՈՒՏՔՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Նոյեմբեր 26-ին տեղի ունեցաւ Սրբ. Պատրիարքին մուտքն յերուսաղէմ:

Մինչեւ Լիւզ ղրմաւորութեան գացած էին՝ Երուսաղէմէն՝ Միաբանութեան կողմէ Գեր. Տ. Ս. Մկրտիչ և Մատթէոս Եպս.ները և Ա. Թարգման Պարզև Վարդապետը, ինչպէս և ներկայացուցիչներ՝ Հ. Բ. Ը. Միութեան, Երուսաղէմի Հայ Բարեսիրական Միութեան, Հայկական Միութեան, Զէյրունի Հայրենակց. Միութեան, Երուսաղէմի Հայ Արիներուն կողմէ: Եւսփայի եւ Ռեմլի ժողովուրդին կողմէ եկած էին երկու վանքերուն տեսուչները, Հոգ. Տ. Տ. Համազասպ և Ներսէս վարդապետները, բազմաթիւ ազգայիններով երկու քաղաքներէ ալ, հակառակ օդին աննպաստ ըլլալուն:

Կառախումբը Լիւզ հասաւ 6. 46-ին: Հայերու բազմութեան հետ հաւաքուած էին կայարանի կամրջակին վրայ բաւական մեծ թուով օտարներ ալ, որոնք խանդավառ ծափահարութեամբ ողջունեցին Սրբազանին ժամանումը: Գեղեցիկ ծաղկեփունջեր նուիրուեցան Սրբազանին՝ Երուսաղէմի Հայ-Արիներուն, ինչպէս նաեւ Եւֆայէն փոքրիկ աղջնակի մը կողմէն:

Մի ըստ միով է բարի զալստեան մաղթանքներու մատուցումէն ետքը կայարանին մէջ գտնուող ժողովուրդը, ամէնքն անխտիր, Սրբազանին աջն համբուրեցին, և ուղեկիցներու բազմութեամբ Սրբազանը մտաւ Երուսաղէմի կառախումբը:

Պիտաբրի կայարանին մէջ ալ ղրմաւորողներու բազմութիւնը աւելցաւ Երուսաղէմէն եկած ազգայիններով:

Երուսաղէմի կայարանն ալ լեցուած էր ազգայիններու և օտարներու բազմու-

թեամբ մը, որ ուրախութեան ծափերով ողջունեց Սրբազանին գալուստը:

Երուսաղէմի կայարանին մէջ Սրբազան Պատրիարքին բարի գալուստ մաղթելու համար եկած էին, բացի բազմաթիւ ազգայիններէ եւ Միաբանութեան կողմէ՝ Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Ս. Եպիսկ. է և Գեր. Տ. Պետրոս Ս. Արքեպս. է, որ ներկայացուցիչ էր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, հետեւեալ պաշտօնական անձերը:

ՀՈՒՆԻՈՐԱՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Յունաց Պատրիարքարանին կողմէ՝ Գեր. Տ. Վասիլիոս Ս. Արքեպս., Յունաց Վանքերն աւագ Թարգմանը, և ղիւանապետը:

Լասինաց Պատրիարքարանին կողմէ՝ Երուսաղէմի Լատին Պատրիարքին (որ քաղաքէս բացակայ էր) Փոխանորդը:

Պապական Նուիրակին կողմէ՝ (որ նոյնպէս բացակայ էր քաղաքէս) Փոխանորդը: Յրանչիսկեան Միաբանութեան կողմէ՝ Թարգմանը և Պրօկուրորը:

Գրպսոց Վանքին կողմէ՝ Եպիսկոպոսը, Գեր. Տ. Բասիլիոս, վարդապետի մը հետ: Ասորոց Վանքին կողմէ՝ (Եպիսկոպոսը, Գեր. Տ. Միխայէլ բացակայ ըլլալով) Ասորոց Ա. Թարգմանը Ապունա Եագուպ, երկու հետեւորդներով:

Հապէաց Վանքին կողմէ՝ Մեծաւորը, Արքա Միխայէլ, երկու հետեւորդներով:

Անգլիկան Եկեղեցիին կողմէ՝ (քաղաքէս բացակայ ըլլալով Տ. Մակ Իննէս եպիսկոպոսը) Եպիսկոպոսական Փոխանորդը և Արչիլին կամբի:

Ռուսաց Արքեպիսկոպոս Գեր. Տ. Անաստասին կողմէ՝ Փոխանորդը:

Հայ Կաթողիկոսներու կողմէ՝ Վեր. Հ.

Յակոբ վրդ. Կիրակոսեան, Հ. Մանուէլ վրդ. Քաչճեանի հետ:

Յոյն Կաթողիկոսներու կողմէ՝ Փոխանորդ Ա. Աբէլ:

Գովիներեանց Միաբանութեան կողմէ՝ Հոգ. Հայր Աբէլ, հետևորդով մը:

Գերման Գործխիոնի Վանքէն՝ Փոխանորդը:

Արաբ Անգլիկաններու կողմէ՝ Պատուելի Մարմուրա:

Հայ Բողոքականներու կողմէ՝ Պատուելի Գ. Գրիգորեան:

Հրեայ Հասարակութեան կողմէ՝ Բառնապետի Փոխանորդը և Դիւանապետը:

ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ԳՈՂԱՔԱՆԵՐ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

Բարձր Կովսէտութեան կողմէ՝ անձնական քարտուղարը՝ Պր. Լ. Գ. Ա. Կըստ:

Պետական Քարտուղարութեան կողմէ՝ (Chief Secretary) Պր. Հ. Բուհի Պէյ:

Երուսաղէմի Նանանգային Կառավար-

չութեան կողմէ՝ Նահանգային Կառավարիչը Պր. Կամպէլ, Երուսաղէմի փոխ-կառավարիչը Պր. Գ. Ֆ. Սուլման և Բ. փոխ-կառավարիչ Նուսուհի Պէյ:

Երուսաղէմի Ոստիկանութեան Ոստիկանական հրամանատար Մէյճըր Ուէյնրայթ և Երկու սպաներ, Գնդապետ Սիկրիտա և Գնդապետ Ուոզլի:

ՀԻՒՊԱՏՈՒՆԵՐ

Ամերիկեան Փոխ-Հիւպատոս՝ Պր. Պլաչ-Փորդ:

Հապէտական Հիւպատոս՝ Պր. Պաւլոս Մէնամէնոյ:

Հունգարական Հիւպատոս՝ Պր. Էլիաս ձէլատ:

Լաքվիական Հիւպատոս՝ Պր. Մ. Կասրի:

Մեխիկայի Հիւպատոս՝ Պր. Ֆերդինանդ Գամիանի:

(Բարի զալտեան նամակ զըրկած էին՝ Ֆրանսական, Գերմանական, Իսպանական և Ռումանական հիւպատոսները:



ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻՒՆ ԵՐՈՒՍԱԴԷՄ ՄՈՒՏԻՒ ԹԱՓՈՐԸ
(Սրբազանին էտեր կ'երեւին՝ Գեր. Տ. Ամբաս եպս., Մամբէր վրդ., Գեր. Տ. Տ. Մկրտիչ և Մետոպ եպիսկոպոսներ, Պետրոս Արեւա. և Մասրես եպիսկոպոս և Յոյն ու Ասորի եկեղեցականներ)

Իսկ Շեյխ Մահմուտ էֆ. էլ Տահանի և Բեազիմ Փաւայ, փոխանակ կայարան գալու՝ յաջորդ օրը բարի գալտեան այցելութիւն տուն ի Պատրիարքարան):

Ներկաները կայարանի մէջ մի առ մի ներկայացուեցան Տեղապահին կողմէ՝ Արքազան Պատրիարքին որ ողջունեց ամէնքը շնորհակալու եւ սիրալիբ զգացումով: Այս արարողութեան աւարտումէն ետք ճամբայ ելաւ ինքնաշարժերու թափօրը, որ կ'երկարէր կայարանէն մինչև քաղաքին Յոզպէի դուռը: Յառաջընթաց բաց կառքի մը մէջ էին Դաւազանակիր և Թարգման վարդապետները: Կը յաջորդէր Արքազան Պատրիարքին կառքը, որուն կը հետեւէին միւսները:

Թափօրը կանգ առաւ Եաֆայի դրան մօտ: Դաւթի բերդին հիւսիսային-արևելեան ծայրը մինչև վանքի դուռը՝ լեցուած էր հայերու և օտարներու անօրինակ հոծ բազմութեամբ մը որ փողոցներէն զատ լե-

ցուցած էր նաև տանիքները: Արք. Պատրիարքին կառքէն էջքը ողջունուեցաւ ժողովուրդին երկար և խանդավառ ծափահարութիւններովը: Ամբողջ Միարանութիւնը զգեստաւորուած, Արքազան Պատրիարքը առած ճանրազին շուրջառ մը և սարկաւագներ՝ թանկագին զգեստներով թափօր կազմեցին և «Որ զխոհուրդ քո գալտեան» շարականով յառաջացան դէպի վանք:

Մինչև Ս. Յակոբայ Տաճարին դուռը ճամբու վրայ գտնուող բոլոր կամարները զարդարուած էին տեղւոյս երիտասարդութեան կողմէ, ծաղկեայ զեղեցիկ դրասանդներով:

Վանքի դռնէն սկսեալ երգուեցաւ «Հրաշափառ»ը, որով Արքազանը մտաւ Մայր Տաճարը, առաջնորդուեցաւ Ս. Գրլխաղբի մատուռը, ուր աղօթեց և ուխտըրաւ մինչ կ'երգուէր «Որ էնն յէութեան» շարականը: Ապա «Ուրախ լեր» երգով ուղուեցաւ փոքր ստեան, գասին մէջ, ուր




ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԸ՝ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՆՅ ՏԱՃԱՐԻՆ ԳԱՌԹԻՆ ՄԷՋ
(Երուսաղեմ մուտքի օրը՝ ի Ս. Գլխաղբի իր ուխտէն ետ: Սրբազանին ետև կ'երեւին Գեր. Տ. Տ. Սմբատ, Պետրոս եւ Մեսրոպ Սրբազանները)

«Ուրախ եղէ ես ոչք սակին ի Տան Տեառն երթիցուք մեք, Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ . . . » սաղմոսէն և «Ի մէջ տաճարիս» աղօթքէն ետք ըսաւ «Պահպանիչ»ը :

Արքայանը յետոյ դարձաւ ժողովուրդին և քանի մը խօսքերով շնորհակալութիւն յայտնելէ ետք եղած ընդունելութեան համար՝ ըսաւ թէ աւելի քան տասը տարիներ առաջ իր առաջին այցելութեանը միջոցին եկած էր իրր պարզ ուխտաւոր մը : Այս վերջին անգամին կուգար դարձեալ իրբեւ ուխտաւոր, բայց նոր եւ նուիրական պարտականութիւններու յանձնառութեամբը ճշուած, ի հարկին իր անձը նուիրելու համար ողջակէզ այս հաստատութեան փառքին, եթէ այդպէս կամենար Աստուած :

Մուտքի այս կարճ պաշտամունքէն ետք Միաբանութիւնը առաջնորդեց Արքայանը ի Պատրիարքարան, ուր անգամ մըն ալ շնորհակալութեան խօսքեր ուղղեց Տեղապահ Արքայանին, Միաբանութեան և Հըրաւիրակ Մարմնոյն երեք անդամներուն : Եւ այս կերպով փակուեցաւ առաջին օրը :



ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դեկտեմբեր 1-ին զՀ. օր տեղի ունեցան Գահակալութեան հանդիսութիւնները, որոնք ժամանակին ծանուցուած էին տպագրուած ազդերով և մասնաւորներու զըրկուած հրաւիրատուներով :

**ՀՐՈՎԱՐՍՍՈՒՆ ՅՍ.ՆՁՆՈՒՄԸ
ԿՍՈՍՎԱՐՉՍՍՆ ՄԷՋ**

Հանդիսութեանց առաջինը եղաւ՝ Արքայական Հրովարտակին պաշտօնական ընթերցումը և յանձնումը՝ Բարձր Կոմիսերի կողմէ՝ Կառավարչատան մէջ :

Առաւօտեան ժամը 10-ին հետեւեալ կերպով կազմուած մարմին մը մասնաւորին քննարկելով մեկնեցաւ Կառավարչատուն Դամասկոսի Դրան մօտ .—

Արքայան Պատրիարք Հայրը,
Ս. Աթոռոյս Տնօրէն Ժողովոյն եօթնանդամները (Գեր. Տ. Տ. Մեսրոպ, Մկրտիչ և Մատթէոս եպսք. և Հոգ. Տ. Տ. Վըր-

թանէս, Գէորգ, Վահան և Կիրեղ վարդապետներ),

Միաբանական Ընդհ. Ժողովոյ Ատենապետը (Հոգ. Տ. Տիրան Վարդապետ),

Կլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչը (Գեր. Տ. Պետրոս Արքեպս.)

Կ. Պոլսոյ Պատր. Փոխանորդը (Գեր. Տ. Սմբատ Եպսկ.),

Եգիպտոսի Հայութեան ներկայացուցիչը (Հոգ. Տ. Մամբրէ Մ. Վարդապետ)

Ս. Աթոռոյս Աւագ Թարգմանը (Հոգ. Տ. Պարգև Վարդապետ),

Ս. Աթոռոյս Դիւանապետը (Տիրար Կ. Նուրեան),

Երուսաղէմի Հայոց կողմէ վեց նշանակովի ներկայացուցիչներ (Բժիշկներ Վ. Գալպիան, Վ. Պասկալ, և Ն. Եղաշեան, Տիրար Դ. Պողոսեան, Խ. Գրադիրեան և Լ. Գէորգեան),

Յուպպէի, Հայֆայի և Ռէմէի Հայոց կողմէ ներկայացուցիչներ (Տեարք Խ. Թաղէոսեան, Ա. Փափազեան եւ Ս. Սինանեան՝ ըստ կարգի) :

Այս մարմինը ընդունուեցաւ Կառավարչատան սրահին մէջ, ուր ներկայ էին Բարձր Կոմիսերին հետ՝ Երուսաղէմի Կառավարիչը, Պետական Աւագ Քարտուղարը, Անձնական Քարտուղարը, և Օգնական Քարտուղարը : Բարձր Կոմիսերը մի առ մի ողջունեց ներկայացուցչական մարմինն անդամները և տպա ըրաւ հետեւեալ ուղերձը որ տեղւոյն վրայ բերանացի թարգմանուեցաւ հայերէնի :

ՌԱԲԵՐ ԿՈՄԻՍԵՐԻՆ ՈՒՂԵՐՉԸ

(Խօսուած իր պալատական մէջ Արքայական Հրովարտակին յանձնումին պահուն) :
(Թարգմանուածքիւն)

«Ճատ ուրախ եմ որ զՁեզ կ'ողջունեմ այստեղ՝ Ձեր ընտրութեան առիթով իբրեւ Հայոց Երուսաղէմի Պատրիարք. ուրախ եմ նաև՝ որ ինձի կը վիճակի Արքայական Հրովարտակին Ձեզի յանձնումը :

Կը փափաքիմ շնորհաւորել զՁեզ՝ Երուսաղէմի պատմական զահուն համար Ձեր ընտրութեան առիթով : Վստահ եմ որ Երուսաղէմի Պատրիարքի հանգամանքով զուք զՁեզ արժանաւոր յաջորդ մը պիտի ընծայէք յոյժ սիրեցեալ Դուրեան հանդուցեալ Պատրիարքին :